
The Armenian Massacres 1894-1896. British Media Testimony. Edited and with an Introduction by Arman J. Kirakossian, University of Michigan-Dearborn, 2008, 614 p.

Աշխատությունը վերաբերում է XIX դարի վերջի իրադարձություններին, երբ արևմտահայության խնդիրը, իր լուծումը չստանալով, սուլթան Աբդուլ Համիդի համար վերածվեց անհնարին «գլխացավանքի»: Քաջ հայտնի է, թե դրանից ազատվելու համար սուլթանն ինչ քայլերի դիմեց:

Այդ դեպքերի՝ 1890-ականների արևմտահայության զանգվածային կոտորածների մասին շատ է գրվել թե՛ ժամանակի հայկական մամուլում, թե՛ հայ և օտարազգի քաղաքական, հասարակական, կրոնական, մշակութային գործիչների կողմից: Ընդունենք, որ ժամանակին օտարազգիների համար առավել անաչառ կենչեին և հնչում են այսօր հենց իրենց՝ օտարերկրացիների վկայությունները նշված դեպքերի մասին:

Այդ առումով պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, դիվանագետ Արման Կիրակոսյանի «Հայկական կոտորածներ 1894-1896 թթ.: Վկայություններ բրիտանական մամուլից» գրքի հրատարակումն ավելի է կարևորվում: Ժողովածուն 2008 թ. լույս է տեսել ԱՄՆ-ում՝ Միչիգանի Դեթրոյտ համալսարանի հայկական հետազոտությունների կենտրոնում, «Դոկորես Զօհրաբ Լիբրան» հիմնադրամի ֆինանսական աջակցությամբ:

Աշխատությունը կոչված է լրացնելու և ամփոփելու XIX դ. վերջին Հայկական հարցի նկատմամբ բրիտանական կառավարության և դիվանագիտության գործունեության մասին Ա. Կիրակոսյանի ուսումնասիրությունները: Ժողովածուի նյութերը կազմվել են հիմնականում Մեծ Բրիտանիայի և ԱՄՆ-ի արխիվներից և գրադարաններից և, փաստորեն, հանդես են գալիս որպես Ա. Կիրակոսյանի «Բրիտանական դիվանագիտությունը և արևմտահայության խնդիրը XIX դարի 30-ական թթ. - 1914 թ.» աշխատության (հրատարակված հայերեն (1999 թ.) և անգլերեն (2003 թ.)) տրամաբանական ավարտ:

XIX դարավերջին բրիտանական մամուլում արևմտահայության կոտորածների մասին հրատարակված և այժմ՝ վերահրատարակված հոդվածներից բաղկացած տվյալ ժողովածուն, հանդես է գալիս նաև որպես Ա. Կիրակոսյանի մեկ այլ աշխատության շարունակություն: Այն է՝ «Հայկական կոտորածներ 1894-1896 թթ.: Վկայություններ ԱՄՆ մամուլից», հրատարակված ԱՄՆ-ում, Ուեյն Սթեյթ համալսարանում 2004 թ.:

Այժմ անգլերենով լույս տեսած այս երկու աշխատությունները, մեկը մյուսին լրացնելով, դարձել են կարևոր, արդիական և բազմաբնույթ մի երկհատորյակ:

Անհրաժեշտ է նշել, որ 2-րդ հատորը՝ վկայություններ բրիտանական մամուլից, ինչպես և ժամանակին 1-ինը՝ վկայություններ ամերիկյան մամուլից, վերոհիշյալ համալսարանի միջոցով, որը հրատարակությունների պաշտոնական առաքիչն է, տարածվելու է ԱՄՆ-ի բոլոր նահանգների և աշխարհի տարբեր երկրների գրադարաններում, գիտական և կրթական հաստատություններում:

Երկհատորյակի ամենամեծ կարևորությունն այն է, որ օտարազգի ընթերցողը հնարավորություն է ստանում այսօր անաչառ աղբյուրներից՝ XIX դարավերջի բրիտանական և ամերիկյան մամուլի նյութերի հիման վրա, ծանոթանալու մեր ժողովրդի մի հատվածի՝ արևմտահայության պատմության ցավոտ էջերին՝ XIX դարի վերջի ողբերգական իրադարձություններին:

Հրատարակությունն արդիական է և ունի քաղաքական մեծ նշանակություն, քանի որ երկու ժողովածուներն էլ կոչված են աշխարհին տեղեկացնելու կատարված փաստի, սակայն դեռևս պատշաճ ճանաչում և գնահատական չստացած հայոց ցեղասպանության սկզբնական փուլի՝ 1894-1896 թթ. արևմտահայության կոտորածների մասին:

Հրատարակությունը կարևորվում է նաև իր բազմաբնույթ նշանակությամբ՝ գիտական, հետազոտական, տեղեկատվական, ուսումնական, դաստիարակչական, բարոյահոգեբանական: Աշխատությունը հատկապես գնահատելի է ուսումնասիրության արժանացած խնդրո առարկայի՝ մամուլի վկայությունների բովանդակության բարոյական արժեքով:

Իսկ բովանդակությունը հետևյալն է: Քաղաքակիրթ աշխարհի արձագանքը հայկական կոտորածների վերաբերյալ միանշանակ չէր: Եթե եվրոպական մեծ տերությունների կառավարությունները Հայկական հարցը դիտարկում էին միայն իրենց շահերի տեսանկյունից, իսկ Մեծ Բրիտանիայի վարչապետ, պահպանողականների առաջնորդ լորդ Սոլսբերին հայտարարում էր Համայնքների պալատում, թե անգլիական նավերը հայերին օգնելու համար չեն կարող բարձրանալ Տավրոսի լեռները, ապա նույն երկրների առաջադեմ հասարակությունը՝ ի դեմս քաղաքական, հասարակական, կրոնական, մշակութային գործիչների և կազմակերպությունների, ոչ միայն բողոքի ձայն էր բարձրացնում, այլև փորձում էր գործնականում հնարավորինս աջակցել տառապյալ հայ ժողովրդին: Այս ամենը լայնորեն արտացոլվել է ժամանակի բրիտանական մամուլում:

Այս առումով շատ հետաքրքրական է և անհրաժեշտ է նշել, որ ժողովածուի հեղինակին հաջողվել է, ընդգծելով կապը անցյալի և ներկայի միջև, ցուցադրել, որ Մեծ Բրիտանիայի ժամանակակից առաջադեմ հասարակությունը շարունակում է մնալ նույն դիրքերում: Ի հաստատումն դրա՝ կարելի է անդրադառնալ աշխատության նախաբանին, որը գրել է Ռիչարդ Բենտինք Բոյլը, Շենոնի կոմսը, որը հայտնի քաղաքական գործիչ է, 1963-1999 թթ. եղել է Լորդերի պալատի անդամ, բրիտանահայկական պառլամենտական խմբի առաջին նախագահը: Շենոնը բարձր է գնահատում ժողովածուի ընձեռած հնարավորությունը՝ 1890-ականների անգլիացի առաջադեմ գործիչների մասին կարդալու և տեղեկություններ ստանալու համար: Խորապես ցավելով արևմտահայության ճակատագրի՝ սկսած 1890-ականների կոտորածներից մինչև Առաջին աշխարհամարտի ընթացքում տեղի ունեցած ողբերգության համար, նա այդ դեպքերը համարում է ոչ միայն հայ ժողովրդի, այլև համայն մարդկության ողբերգություն և հանցավոր նախադեպ ապագայի համար:

Աշխատությունն ընդգրկում է ավելի քան 19 հեղինակների 48 հոդված, որոնք տեղ էին գտել 1890-ականների բրիտանական հետևյալ հայտնի պարբերականներում. “The Contemporary Review-ն”, “The Nineteenth Century-ն”, “The Fourteenth Century Review-ն”, “The Blackwood’s Magazine-ը” և “The Spectator-ը”: Նշված ամսագրերը բավական մանրամասն ներկայացնում էին Օսմանյան կայսրությունում սուլթանի կառավարության հակահայկական քաղաքականության փաստական վկայությունները, անդրադառնում բրիտանական հասարակական կարծիքին 1890-ականներին՝ հայկական ճգնաժամի խորացման ընթացքում, ինչպես և մեծ տերությունների, ներառյալ՝ Բրիտանիայի դիրքորոշմանը կոտորածների վերաբերյալ:

Նյութի մատուցման առումով ժողովածուն ունի յուրահատուկ մոտեցում: Հեղինակը չի դիմել քիչ թե շատ տարածված ձևի: Այն է՝ վերահրատարակել բրիտանական ամենօրյա թերթերում հայկական կոտորածների մասին տեղ

գտած տեղեկատվությունը, ինչը, իհարկե, ինքնին շատ կարևոր և հարուստ փաստական աղբյուր է: Նպատակը այլ է. քաղաքական և սոցիալական տարբեր ուղղվածություն ունեցող պարբերականներից ընտրված հոդվածների միջոցով ներկայացնել բրիտանական հայտնի հասարակական, քաղաքական, կրոնական գործիչների, խորհրդարանականների, գիտնականների, ճանապարհորդների, թղթակիցների վերլուծությունները, կարծիքներն ու տեսակետները հայ ժողովրդի, Հայկական հարցի, արևմտահայության կոտորածների մասին:

Վերահրատարակված այս հոդվածներն ընդգրկում են տարբեր հիմնահարցեր, որոնք կարելի է բաժանել մի քանի խմբի.

1) հոդվածներ, որտեղ հեղինակները (Ռամսեյ, Դիլլոն, Լինչ, Հարրիս) անդրադարձել են հայ ժողովրդի պատմությանը, աշխարհագրությանը, մշակույթին, ազգային սովորույթներին, ժողովրդագրությանն ու անգամ Արևմտյան Հայաստանի և Օսմանյան կայսրության այլ մասերի բնության նկարագրությանը.

2) հոդվածներ, որտեղ ներկայացվում են Օսմանյան կայսրության պատմությունն ու ընթացիկ վիճակը, Արդուլ Համիդի ներքին և արտաքին քաղաքականությունը և թուրքական կառավարության գործունեությունը, քրիստոնեության և իսլամի միջև հակամարտություններին վերաբերող խնդիրները (Դեյվի, Ահմադ, Հարրիս, Մաք Քոլլ, Գեֆֆեն, Ռամսեյ, Դյու Քեյն).

3) հոդվածների երրորդ խմբում ներկայացվում են հայերի կյանքի ծանր պայմանները Արևմտյան Հայաստանում, Օսմանյան կայսրության տարբեր քաղաքներում և վիլայեթներում հայ ազգաբնակչության կոտորածների մանրամասները (Սթիվենսոն, Դիլլոն, Լինչ, Մաք Քոլլ, Գլադսթոն, Ռոջերս).

4) չորրորդ խումբը բացահայտում է Հայկական հարցի վերաբերյալ Մեծ Բրիտանիայի լիբերալ և պահպանողական կառավարությունների վարած քաղաքականությունը. Արևմտյան Հայաստանում բարենորոգումները խրախուսելու և իրականացնելու դիվանագիտական փորձերը (Սթիվենսոն, Բլանթ, Դիլլոն, Լինչ, Ռասսել, Ահմադ, Գլադսթոն).

5) հինգերորդ խումբն ընդգրկում է հոդվածներ Հայկական հարցի վերաբերյալ Ռուսաստանի, ԱՄՆ-ի, Ֆրանսիայի, Գերմանիայի և այլ մեծ տերությունների քաղաքականության վերաբերյալ (Լինչ, Դիլլոն, Բլանթ, Ռասսել, Գեֆֆեն):

Հատուկ ուշադրության են արժանի Լոնդոնի “The Spectator” շաբաթական պարբերականում տեղ գտած նյութերը: 1890-1897 թթ. այստեղ տպագրվել էին շուրջ 30 խմբագրական և նորությունների թողարկումներ, որոնք հնարավորություն են տալիս քայլ առ քայլ հետևելու Օսմանյան կայսրությունում հակահայկական գործողությունների զարգացմանը և հասկանալու Հայկական հարցում բրիտանական կառավարությունների՝ լիբերալ թե՛ պահպանողական, քաղաքականության հիմնական ուղղությունները:

Անհրաժեշտ է ընդգծել նաև այն հանգամանքը, որ ժողովածուի հեղինակին հաջողվել է ընտրած հոդվածների միջոցով իսկապես հստակեցնել Մեծ Բրիտանիայի վարած քաղաքականությունը: Ներկայացվող նյութը փաստում է, որ ուսումնասիրվող ժամանակահատվածում Մեծ Բրիտանիան, դեռևս լինելով աշխարհի առաջատար տերություն, կարող էր դեր խաղալ և ազդել փոքր ժողովուրդների ճակատագրի վրա, տվյալ դեպքում՝ արևմտահայության: Այնպես որ, Բրիտանիայի հասարակության առաջադեմ ներկայացուցիչները, մասնավորապես վերահրատարակված հոդվածների հեղինակներից շատերը, լուրջ քննադատական վերաբերմունք էին ցուցաբերում Օսմանյան կայսրության նկատմամբ բրիտանական կառավարության վարած քաղաքականությանը: Նրանք առավել ակտիվ և վճռական քայլերի կոչեր էին անում, ընդհուպ մինչև ռազմական ինտերվենցիայի քրիստոնյա հայ բնակչությանը պաշտպանելու նպատակով: Այս առումով ներկայացված հոդվածներում քննադատության է արժանացել նաև

եվրոպական մյուս տերությունների քաղաքականությունը Հայկական հարցի վերաբերյալ:

Ընտրված հոդվածների հեղինակները պատկերավոր ներկայացնում են բրիտանական հասարակության մարդասիրությունն ու բարեգործական գործունեությունն արևմտահայերի նկատմամբ: Ա. Կիրակոսյանի ընտրած հոդվածներում ճշմարտացիորեն ներկայացված է նաև, որ բրիտանացիների կարեկցանքի հիմքում ընկած էին ոչ թե սոսկ հայերի նկատմամբ մարդասիրական վերա-բերմունքը և նրանց (հայերի) մարդկային և ազգային արժանիքների գնահատումը, այլ պարզապես կրոնական գաղափարները: Այսինքն՝ կարեկցանքի հիմքում նախնառաջ տեղ էր գտել քրիստոնեությունը մահմեդականությունից փրկելու ցանկությունը և իսլամի բացասական էության մասին լայնորեն տարածված կարծիքը: Փաստորեն, բրիտանացիների դրսևորումների ձևավորման վրա զգալիորեն ազդում էր նրանց կողմից Աբդուլ Համիդի կերպարի ընկալումը՝ որպես հակաքրիստոնեական, պանիսլամական կառավարչի:

Հրատարակությունն ունի մեկ արժանիք ևս: Կատարված աշխատանքը առավել գնահատելի է ժողովածուում վերահրատարակվող հոդվածների ընտրության հարցում հեղինակի դրսևորած գիտական անաչառ մոտեցման շնորհիվ: Հրատարակությունն ընդգրկում է ոչ միայն հայերի նկատմամբ դրական դրսևորումներ արտահայտող հոդվածներ և տեղեկություններ: Այստեղ կան և այլ բնույթի հոդվածներ: Օրինակ՝ Ուոլթեր Հարրիսը իր «Հայկական հարցի անաչառ պատկերը» հոդվածում, սառնասրտորեն ներկայացնելով 1894-1896 թթ. ողբերգական իրադարձությունների նկարագրությունը, արդարացնում է Օսմանյան կառավարության հակահայկական քաղաքականությունը: Հեղինակներ Սազլեյնը և Ահմադը իրենց հոդվածներում՝ «Հնդկաստանի մահմեդականները և Հայկական հարցը», «Աբդուլ Համիդի մահմեդական կերպարը և տերությունները», քննադատում են Մեծ Բրիտանիայի քրիստոնեական՝ կենտրոնաձիգ քաղաքականությունը Մերձավոր Արևելքում՝ մեղադրելով նրան բրիտանական կայսրության բազմամիլիոն մահմեդական բնակչության շահերն ու կարծիքները լիովին արհամարհելու մեջ:

Փաստորեն, ակնհայտ է, որ տվյալ հոդվածներն արտացոլում են Հայկական հարցի նկատմամբ ոչ դրական դրսևորումներ և մոտեցումներ, ինչն էլ հնարավորություն է տալիս և օգնում ընթերցողին օբյեկտիվորեն, բազմակողմանի, համեմատական և արդարացի մոտեցումների հիման վրա ծանոթանալու, ուսումնասիրելու և հասկանալու XIX դարի վերջի իրողությունները:

Ուշագրավ է, որ գիտնականը XIX դարավերջի հոդվածները վերահրատարակել է հենց բնագրային տեսքով՝ չկատարելով ոչ մի խմբագրական փոփոխություն: Հեղինակն առաջաբանում պարզաբանում է, որ անգամ հատուկ անուններում (մասնավորապես անձանուններում և տեղանուններում) և այլ բառերում տեղ գտած տառասխալները շտկված չեն, հարմարեցված չեն ժամանակակից գրական լեզվին այն պարզ նպատակով, որ տեքստի չխմբագրված՝ բնագրային տարբերակը պահպանում է և, ավելին, փոխանցում է ժամանակի շունչը, ոգին, մոտեցումներն ու ընկալումները: Կուզեի նաև ավելացնել, որ այս դեպքում բնագրային տեսքով վերահրատարակված հոդվածների ժողովածուն ստանում է նոր՝ հրատարակված սկզբնաղբյուրի արժեք:

Իմ կարծիքով, տվյալ հրատարակությունը գիտական աշխատություն կոչվելու լիարժեք իրավունք ունի: Այն չի սահմանափակվում միայն XIX դարավերջի՝ արևմտահայության մասին հարուստ աղբյուրագիտական նյութ հանդիսացող հոդվածների ուղղակի ներկայացմամբ: Օտարագգի՝ հայ ժողովրդի պատմությանը ոչ քաջատեղյակ ընթերցողի համար գիտնականը հրատարակության մեջ, բացի համառոտ բացատրական առաջաբանից, ընդգրկել է նաև ընդարձակ բովանդակալից ներածություն (մոտ 50 էջ): Ներածությունը հնարավորություն

է տալիս անաչառ, գիտական վերլուծության հիման վրա պատկերացում կազմելու XIX դ. 30-70 թթ. ընկած հատվածում արևմտահայության կացության, Թուրքիայի նկատմամբ Մեծ Բրիտանիայի քաղաքականության, 1870-1890-ական թթ. արևմտահայության կոտորածների, բրիտանական հասարակական կարծիքի, ինչպես նաև մամուլում տեղ գտած վկայությունների մասին:

Գրքում տեղ է գտել ծանոթագրությունների ընդարձակ տեղեկատվական հավելված: Ներկայացվում են առաջաբանում օգտագործված աղբյուրները և գրականությունը, յուրաքանչյուր հոդվածի համար անհրաժեշտ տեղեկություններ՝ ժամանակի հայտնի հասարակական, պետական, քաղաքական, կրոնական, դիվանագիտական և մշակութային գործիչների, ժողովածուում տեղ գտած հեղինակների կյանքի և գործունեության, ինչպես նաև օգտագործված պարբերականների և թերթերի մասին:

Աշխատության մեջ զետեղված է նաև անձնանունների, տեղանունների և այլ հատուկ անունների այբբենական ցանկ:

Մեկ այլ կարևոր հանգամանք՝ հոդվածները ներկայացվում են գիտական սկզբունքների համաձայն. պահպանելով ժամանակագրական կարգը՝ հեղինակը ներկայացնում է պատմական իրադարձությունների իրական ընթացքը (1890, 1891, ապա՝ համապատասխանաբար մինչև 1897 թ.): Այն, որ 1890 և 1897 թթ. նույնպես ընդգրկված են ժողովածուում, ընդգծում է, որ հեղինակն արել է ավելին, քան իր առջև դրված խնդիրն էր՝ ընդլայնելով հոդվածների ժամանակագրական սահմանները՝ դուրս գալով 1894-1896 թթ. շրջանակներից:

Բարձր գնահատելով աշխատությունը՝ մնում է միայն ցանկանալ, որ հեղինակը կատարված աշխատանքը հասցնի տրամաբանական ավարտի՝ ձեռնամուխ լինի հրատարակության հայերեն թարգմանությանը, ինչը խիստ կարևոր է հայ ընթերցողների լայն շրջանների համար:

ՂԱՄԲԱՆՅԱՆ Ա. Վ.

Պատմական գիտությունների թեկնածու